ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը և խորհրդային Ռուսաստանը

Հետազոտող ուսուցիչ՝ **Կարինե Բաղալյան**

Երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1918-1920թթ /մաս 1/ 5

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1918-1920թթ /մաս 2/ 9

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27. ՊԱՏԵՐԱԶՄ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1920 թվականի սեպտեմբերի 23-ին քեմալական Թուրքիան հարձակվեց Արևելյան Հայաստանի վրա: Սկսվեց անհավասար մի պատերազմ, որը պատրաստվում էր թուրքական կառավարության և եվրոպական պետությունների կողմերից: Մուդրոսի համաձայնագրով դաշնակիցներին իրավունք էր վերապահվում Թուրքիայից վերցնել հայկական վեց վիլայեթներ և Սևրի դաշնագրով այդ վիլայեթները պետք է հանձնվեին Հայաստանին: Ընդունելով այսպիսի որոշում դաշնակիցները մտահոգված էին ոչ թե հայկական հողերը իմի հավաքելով և մեկ միասնական Հանրապետություն ստեղծելով, այլ մանդատի իրավունքով Հայաստանը տիրելով: Սակայն բոլշևիկյան Ռուսաստանի հաղթանակները և հաղթարշավը դեպի Կովկաս, ստիպեցին Անտանտի երկրին փոխել իրենց քաղաքականությունը դեպի Թուրքիան և սկսեցին սիրաշահել նրան՝ թույլատրելով «գործողությունների ազատություն» արևելքում: Զոհաբերելով Հայաստանին, հրահրել, նոր պատերազմ: Ստեղծված պայմաններում Անտանտի երկրները պահանջում էին իրականացնել Սևրի պայմանագրի կետերը /հոդված 88, 89, 92/:

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ արել են դաշնակից տերությունները, ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը համաձայնում են Էրզրումի և Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում սահմանազատումը թողնել ԱՄՆ որոշմանը, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելուն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1918-1920թթ /մաս 1/

Հայաստանը իրավունք ուներ պահանջել իր հողերը և վերամիավորել Արևմտյան և Արևելյան Հայաստանը: Թուրքիան հարձակվելով Հայաստանի վրա վերջ կդներ իր վաղեմի երազանքի իրագործումը, ինչպես Քյամիլ փաշան է հայտարարել. «Եթե այդ ազգը բնաջինջ լինի, քրիստոնյա եվրոպան կրոնակից չի ունենա տաճկական Ասիո մեջ և կթողնե զմեզ հանգիստ...»: Այս էր թուրքական պետության կառավարության պետության հայատյաց քաղաքականությունը, որը մինչև այժմ էլ շարունակում է Ադրբեջան կոչված պետության միջոցով: Այստեղ տեղին է հիշել, 1919-1920 թվականներին քեմալականները ձևացնում էին բոլշևիկյան քաղաքականության կողմնակից և իբր պայքարում էին իմպերալիզմի դեմ:

Դա է վկայում Սամի Բեյի հակասովետական այցերը Դաղստան, Ինգուշետիա, Ադրբեջան:

Մինչ Հայաստանի հարձակվելը, Թուրքիան բավականին աշխատանք էր կատարել՝ զորահավաք կազմակերպելով, թիկունքը ապահովելով, արգելքները ոչնչացնելով, բանակցելով նաև բոլշևիկյան Ռուսաստանի հետ:

Ոգեշնչված Արևելքի ժողովուրդների Բաքվում տեղի ունեցած համագումարի ամբիոնից հայ ժողովրդի նկատմամբ հնչած սպառնալիքներից և «իմպերիալիստական» Հայաստանը ոչնչացնելու կոչերից, համոզված Հայաստանի Հանրապետությունը արդեն մեն-մենակ է Թուրքիայի դեմ-դիմաց, խորհրդային Ռուսաստանից մեծաքանակ զենք ու դրամ ստացած քեմալական զավթիչները, 1920 թվականի սեպտեմբերի 23-ին պատերազմ սկսեցին Հայոց աշխարհի դեմ:

Արևելյան ճակատի հրամանատար նշանակված Քյազիմ Կարբեքիրի բանակը հարձակվելով Հայաստանի վրա նպատակ ուներ վերջին մահացու հարվածը հասցնել հայ ժողովրդին:

Մուստաֆա Քեմալը գրում էր, որ այդ պատերազմի նպատակն էր «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը»:

Իրավամբ այդ պատերազմը զավթողական և հայաջինջ նպատակ էր հետապնդում: Թուրքերը չէին ճանաչում Սևրի դաշնագիրը, վայելում էին խորհրդային Ռուսաստանի համակրանքը, դրա հետ միասին ինչպես պատմաբան Լեոն է գրում. «Սա գործարք էր Ֆրանսիայի և Անկարայի» միջև, Ֆրանսիայից Թուրքիան ստանում էր զենք,

ռազմամթերք, հանդերձանք և այլն: «Քեմալականները կենդանացան, ոտքի կանգնեցին հաղթելով հայերին, կոչնչացնեն իրենց իսկ ընդունած Սևրի դաշնագիրը»:

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաղթանակից հետո, ավելի ուժեղացավ բոլշևիկյան Ռուսաստանի ազդեցությունը Կովկասում: Սա ևս մի առիթ էր Թուրքիային Եվրոպան ուղղորդեր դեպի Հայաստան: Հայ-թուրքական պատերազմը Անգլիայի և Ֆրանսիայի թույլտվությամբ և բոլշևիկյան Ռուսաստանի համագործակցությամբ լավ կազմակերպված գործարք էր:

Թուրքական բանակը 60 հազարանոց զորքով մխրճվեց Հայաստանի խորքերը: Թշնամին, քանդում, ավերում, ոչնչացնում, անարգում էր կանաց և ֆիզիկապես բնաջնջում հայությանը:

Հայկական հանրապետության կառավարությունը հոկտեմբերի 8-ին օգնություն էր խնդրում արևմտյան «դաշնակիցներից» և մենշևիկյան Վրաստանից, բայց նրանք խցանել էին իրենց ականջները: Հայկական պատվիրակությունը երկրորդ նամակը ուղարկում է Ազգերի լիգա, հոկտեմբերի 12-ին տեղեկացնելով, որ թուրքերը էվակուացրել են Կաղզվանն ու Սարիղամիշը և սպառնում են Երևանին: Նույնաբովանդակ նամակ է ուղարկվում նաև դաշնակից տերություններին:

Ազգերի լիգան հոկտեմբերի 23-ին վերջապես արձագանքում է հայկական կողմերի նամակներին, թեև ոչ դրական: Նախագահ Հյումանսը գրում է, որ Սևրի պայմանագրի իրականացումը Ազգերի լիգայի իրավասության տակ չէ և չի կարող որևէ քայլ ձեռնարկել: Հայաստանը պետք է օգնության հարցով դիմեր դաշնակիցներին: Մինչ ընթանում էր նամակագրությունը, հայ-թուրքական ռազմաճակատում իրավիճակն էլ ավելի էր ծանրանում:

Սրանով դաշնակիցները փաստորեն «լվանում էին» իրենց ձեռքերը հայկական հարցից՝ դերակատարությունը թողնելով Ազգերի լիգային: Դաշնակիցներ կոչվածները՝ ԱՄՆ-ն, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան Հայաստանին թողեցին անպաշտպան Թուրքիայի ագրեսիայի դեմ-հանդիման: Հայկական խնդրի վերաբերյալ բոլոր խոսքերն ու գործը չէին համընկնում Եվրոպայում: Նկատեք, որ Հայաստանին փրկելու ջանքերը շարունակվում էին այն ժամանակ, երբ Հայաստանի Հանրապետությունը Թուրքիայի հետ դեկտեմբերի 2-ին կնքել էր Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը և ռազմական գործողությունները դադարեցվել էին: Հայաստանում հաստատվել էին խորհրդային կարգեր: Այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե Ազգերի լիգան տեղյակ

չէր Հայաստանի իրադարձությունների մասին, սակայն փաստերը այլ բաներ էին հուշում:

Մինչ դաշնակիցները դատարկաբանությամբ էին զբաղված, թուրքերը մեկը մյուսի հետևից գրավում էին Հայաստանի քաղաքներն ու գյուղերը, հայոց հողը նորից էր ներկվում հազարավոր անմեղ մարդկանց արյունով:

Այդ օրերին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը փորձեր արեց դադարեցնելու ավերիչ պատերազմը, քանի որ հիմնականում հասել էր իր նպատակին: Հայաստանը ծանր պարտություն էր կրում, որի համար կային մի շարք պատճառներ: Դրանցից մեկը այն էր, հայկական բանակի ոչ բոլոր զորամասերն էին անհրաժեշտ չափով զինված և հանդերձավորված, բայց չի կարելի ասել, որ Հայկական բանակը ի վիճակի չէր կռվելու թուրք զավթիչների դեմ: Ավելի քան 40 հազարանոց բանակում մեծ թիվ էին կազմում ռուսական զինվորական ծառայության անցած գեներալներ, 1400-ից ավելի սպաներ, այլ հրամանատարներ: Չի կարելի ասել, թե հայոց բանակը մարտունակ չէր, պարզապես չէր կռվում այնպես, ինպես կարող էր կռվել:

Քեմալականները մեծ աշխատանք էին ծավալել հայոց բանակը ներսից քանդելու համար: Նրանք լուրեր էին տարածում, թե «քեմալականները նույնպես բոլշևիկներ են» կամ նրանց մեջ «ռուսներ կան»:

Ողբերգական վիճակը թանձրացնում էին հայ բոլշևիկները: 1920 թվականի հունիսին Բաքվում ստեղծվել էր Հայաստանի կոմկուսը, որը դարձել էր Ադրբեջանի ձեռքին կույր գործիք և ուղղված էր Հայաստանի Հանրապետության դեմ: Զարմանալի է թուրք-հայկական պատերազմի ընթացքում հայ բոլշևիկներից ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու որևէ կոչով: Հայկական զորքը կազմալուծվեց, կային զորամասեր սակայն, որ կռվում էին հերոսաբար:

Թուրք-հայկական պատերազմի ամենաողբերգականը 1920 թվականի հոկտեմբերի 30-ին առանց կրակոցի Կարսի բերդի հանձնում էր թշնամուն: Նույն ձևով նոյեմբերի 5-ին հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը:

Թուրքը գրավելով Կարսը, Արդահանը և Ալեքսանդրապոլը տիրացավ մեծ քանակի ռազմական ավարի: Պատերազմը նոր աղետ բերեց հայ ժողովրդին, հայերի արյան նոր բաղնիքներ էին սարքում գրաված շրջաններում: Կարսը գրավելուց հետո քեմալականները երկու շաբաթ զբաղված էին հայերի կոտորելով: Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, զավթիչները անցան հաջորդ պլանի՝ Հայաստանի շրջանների,

Նախիջևանի երկրամասի գրավմանը, առաջանալով շարժվեցին Թիֆլիսի ուղղությամբ, հարաբերություններ ստեղծեցին վրացական մենշևիկների հետ, որոնք գրավել էին Լոռվա «չեզոք գոտին»: Թուրքիան անպատիժ շարժվում էր առաջ, գրավել էր Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի մեծ մասը՝ մոտենալով Երևանին: Այս ֆոնի վրա էլ տեղի է ունենում 1920 թվականի նոյեմբերի 9-ին ՌԿ(բ) բյուրոյի և Ադրբեջանի կենտկոմի միացյալ պլենումը, որտեղ քննարկվում էր հայ ժողովրդին «փրկելու»՝ խորհրդային կարգեր հաստատելու համար: Օրգոնիկիձեն հրամայում է Կարմիր բանակի զորամասերը պատրաստ վիճակի բերելու և Հայաստան մտնելու համար:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ 1918-1920թթ /մաս 2/

Բաքվում կազմվում է ռազմահեղափոխական կոմիտեն Ս. Կասյանի գլխավորությամբ:

Հայկական պատվիրակությունը ընդունեց խորհրդային կառավարության ներկայացուցիչ Բ. Լեգրանի առաջարկը Կարմիր բանակի մուտքը Հայաստան և երաշխիքը, որ Թուրքերը ետ կքաշվեն մինչև 1914 թվականի սահմանագիծը: 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Ալ. Խատիսյանի և Կարաբեքիրի ձեռագրերով ստորագրեցին ծանրագույն պայմանագիրը: Այն կնքվեց նույն ժամանակահատվածում, երբ Հայաստանի Հանրապետությունը իր լիազորությունները արդեն վայր էր դրել:

Ընկավ Հայաստանի առաջին Հանրապետությունը, որը հռչակվել էր 1918 թվականի մայիսի 28-ին:

Անրադառնալով Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքմանը Չիչերինը նշում էր, որ «Հայաստանի համար չափից դուրս ծանր հաշտության պայմանագիր էր ... նույնիսկ ձևականորեն անկախ մնացած մասը փաստորեն լրիվ կախման մեջ էր ընկնում Թուրքիայից»: Տրապիզոնի հաշվեհարդարից հետո թուրքական իշխանությունները գործեցին մի շարք չարագործություններ՝ խաղալով նաև համաշխարհային հեղափոխականի և խորհրդային երկրի բարեկամների դերը:

Հայաստանի վրա հաստատվում էր Թուրքական պրոտեկտորատը: Հայաստանի զինուժը պետք է կազմեր 1500 զինվոր ու 22 գնդացիրով և 8 հրանոթով: Թուրքիային տրվում էր անսահմանափակ իրավունքներ և Հայաստանի Հանրապետությունը վերածվում էր «Երևանի» կառավարության:

Թուրք-բոլշևիկյան գաղտնի համաձայնագիրը, որը կայացել էր Մոսկվայում, բնական է այսքան իրավունքներ չէր նախատեսել Թուրքիային, իհարկե պետք է նրանք ըմբոստանային, թույլ չտային իբր հանուն հայ ժողովրդի շահերի՝ չեղյալ համարվեր 1920 թվականի դեկտեմբերի 2-ի պայմանագիրը: Արդեն խորհրդայնացված Հայաստանը Ռազմա-հեղափոխական կոմիտեն, պահանջում էր դուրս բերել թուրքերից զինուժը: Ռուսաստանը ստանալով այն, ինչ չանկանում էր, պարտադրեց թուրքերին 1921 թվականին դատարկել Ալեքսանդրապոլը: Թուրք-Բոլշևիկյան համաձայնագիրը հայ ժողովրդին կրկին կործանման եզրին կանգնեցրեց:

Լեհաստանում Հ. Բատուվսկին գրում էր, որ Կարմիր բանակի և Թուրքիայի վերջնագրի ճնշմանը Հայաստանը տեղի տվեց և պարտվեց: Հետո Վ. Ի. Լենինը կգրի «Արևելքում մեր քաղաքականությունը այս տարվա ընթացքում հաջողություններ ունեցավ: Մենք պետք է ողջունենք Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի Ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը...»:

Հայաստանը և հայ ժողովուրդը դարձան սին գաղափարախոսության քավության նոխազը, զրկվելով իր պատմական հայրենիքից:

Կովկասը դարձավ բոլշևիկյան Ռուսաստանի համար որպես մի կամուրջ, որպես բազա՝ որտեղով դեպի Արևմուտք և Արևելք պետք է անցնեին սովետական, կոմունիստական գաղափարախոսությունները: Այսպիսով տարածաշրջանը դառնում էր քաղաքական նշանակություն ունեցող, իրադարձությունների համար մի նոր թատերաբեմ: 1920 թվականի դեկտեմբերի 21-ին Ռկ(բ)Կ VIII համագումարում Վ. Ի. Լենինը ասել է. «Անտանտը մեզ համար փոս էր փորում, ինքն էլ ընկավ այնտեղ, մենք ձեռք բերեցինք Հայաստանը: Թուրքիան չէր կարողանում համակերպվել Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար և պատրաստ էր կրկին անգամ հարձակման»: Այսպես 1921 թվականի հունվարի 25-ի տվյալներով թուրք հրոսակները սպանել էին Աղբուլաղում 1186 մարդ Ղալթաղչիում՝ 2000, Ղարաքիլիսայում՝ 1000 մարդ, փոսերում գտնվել էին 11886 դիակ, որոնց 80 տոկոսը կանայք և երեխաներ էին: Կարելի է եզրակացնել այս թվերով, որ մարդասպանը դեռ շարունակում էր իր հանցագործությունները հայերի նկատմամբ, չնայած որ Հայաստանում արդեն խորհրդային կարգեր էր հաստատվել: Թուրքերի վայրագությունները զավթած շրջաններում կարելի է որակել կրկնակի ցեղասպանություն: Այդ մասին գրել է Չիչերինը Լենինին գրած նամակում: Սովետական Հայաստանի պետական հանձնաժողովի տվյալներով, Ալեքսանդապոլի շրջաններում թուրքերը կոտտորեցին 150 հազար մարդ և նրանց հասցրած նյութական վնասը կազմեց շուրջ 19,743,680 ռուբլի ոսկով: Քեմալականները արդեն 1921 թվականի փետրվարին հասկացան, որ խորհրդային կարգերը Հայաստանում ժամանակավոր չէ, նրանք դեմքով շրջվեցի դեպի Եվրոպա, ստացածը քիչ համարելով՝ Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի զգալի մասը, շարունակեցին դավադիր գործողությունները ոչ միայն Հայաստանի, այլև բոլշևիկյան Ռուսաստանի դեմ: 1921 թվականի փետրվարի 18-ին Հայաստանում ապստամբություն բարձրացավ խորհրդային իշխանության դեմ: Ապստամբությունը

գլխավորում էր ՀՅԴ կուսակցությունը: Նրանք գրավեցին Երևանի մի քանի շրջաններ և ստեղծեցին «Հայրենիքի փրկության կոմիտե» Ս. Վրացյանի գլխավորությամբ: Ապստամբությունը կրկին անգամ հայ ժողովրդին ծանր կացության մեջ դրեց, բնական է այն ճնշվեց Կարմիր բանակի շնորհիվ:

1920 թվականին թուրք-հայկական պատերազմի արդյունքները, այսինքն թուրքերի կողմից հայկական հողերի զավթումը պետք է «օրինականացվեր», ուստի 1921 թվականի փետրվար-մարտ ամիսերին Մոսկվայում տեղի ունեցավ խորհրդա-թուրքական կոնֆերանսը: Աշխատանքը սկսվեց փետրվարի 26-ին, բայց Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացուցիչ՝ Ալեքսանդ Բեկզադյանին թույլ չտվեցին մասնակցել բանակցություններին, այն դեպքում, երբ հարցը վերաբերվում էր Հայաստանի տարածքների խնդրին, հայ ժողովրդի ճակատագրին: Այդ բանակցություններով Ռուսաստանը և Թուրքիան արհամարել և ստորացրել են Հայաստանին: Տեղին է հիշել, որ այդ բոլոր գործողություններից հետո էլ Ալ. Բեկզադյանը փորձում էր արդարացնել մոսկովյան իշխանությունների բռնած բացահայտ արհամարհական դիրքը դեպի Հայաստանը և հայ ժողովուրդը:

Խորհրդային Ռուսաստանի շահերը պահանջում էին բարդություններ չստեղծել Թուրքիայի հետ հարաբերություններում: Թուրք պատվիրակները շարունակ պնդում էին, թե կոնֆերանսի անհաջողության դեպքում, իր երկիրը կշրջվի դեպի Արևմուտք: Այդ օրերին մեկ այլ պատվիրակություն Լոնդոն էր ժամանել և բանակցում էր անգլիական կառավարության հետ:

Մուստաֆա Քեմալը դարձել էր բոլշևիզմի «հավատարիմ զինակիցը», ինչպես նաև պատվար բոլշևիզմի դեմ: Հայտնի է դարձել նաև, որ 1921 թվականի փետրվարին Թալեաթը գալիս է Բեռլինից Ժնև և հանդիպում անգլիական մի դիվանագետի հետ, նրան հավաստում, որպես Անգլիայի նկատմամբ անկեղծ համակրանք տածող գործիչ:

Երբ Մոսկվայում տեղի է ունենում խորհրդա-թուրքական կոնֆերանսը, քաջ հայտնի Սողոմոն Թեհլերյանը Բեռլինում գնդակահարեց հայ ժողովրդի արյունոտ դահիճ Թալեաթին:

1921 թվականի մարտի 16-ին, ՌԽՖՍՀ և Թուրքիայի պատվիրակները ստորագրեցին «Բարեկամության և եղբայրության» մասին պայմանագիրը: Այդ օրը հայ ժողովրդի պատմության սև էջերից մեկը դարձավ:

Պայմանագիրը կնքվել էր, բայց թուրքերը չէին պատրաստվում հեռանալ Ալեքսանդրապոլից, իսկ զավթած տարածքները կազմում էին շուրջ 20 հազար քառ. կմ: Զավթիչների համար շատ կարևոր էր Նախիջևանի գավառը հայերից խլելը, լավ գիտակցելով, որ Ռուսաստանը չի համաձայնի այդ ստրատեգիական դիրքերից, թուրքերը գնացին խորամանկության, գավառը «կրտսեր եղբորը» Ադրբեջանին հանձնելու համար:

Նախիջևանի գավառը ըստ թուրքերի պանթուրքիզմի տեսակետից կապող օղակ էր Թուրքիայի և Ադրբեջանի՝ Թուրանի միջև: 1921 թվականի մարտի 16-ին պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը խլվեց Հայաստանից 5.5 հազար քառ. կմ և դարձավ Ադրբեջանի պրոտեկտորատ:

Մոսկվայի խորհրդա-թուրքական սահմանագիծը գոյություն ունի մինչ այժմ: նույն թվականի հոկտեմբերի 13-ին, ՌԽՖՍՀ ներկայացուցիչների Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև Կարսում կնքվեց պայմանագիր, որը ըստ էության Մոսկվայի պայմանագրի վերահաստատումն էր: Պրոֆեսոր Միլլերը նշում է «Հայ ժողովուրդը շատ զոհեր կրեց թուրքական թալանչիական քաղաքականությունից: Նա ստացավ ավելին քան նախատեսված էր ու տարավ քաղաքական հաղթանակ»:

Թշնամին համառորեն չէր պատրաստվում հեռանալ Ալեքսանդրապոլից, ձգտում էր Հայաստանին շրջափակման մեջ պահել, օակը նեղացնել և կտրել այս անգամ Ռուսաստանից, երկաթուղին իր ձեռքում պահելով, կտրել արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը: Միայն 11-րդ բանակի հրամանատար Գեկկերի պահանջով զավթիչները հարկադրված հեռացան Ալեքսանդրապոլից:

Ռուս-թուրքական դավադիր պայմանագրի հետևանքով հայ ժողովուրդը և Հայաստանը զրկվեց իր պատմական հայրենիքից, զրկվեց Ախալքալաքից, Նախիջևանից, Կարսի մարզից և վերջապես մեկ հրահանգով նաև Արցախից:

Կովկասը դարձավ միջազգային ճակատ, ինչպես 100 տարի առաջ այնպես էլ այժմ, մեր տարածաշրջանը նմանվում է եռացող կաթսայի, որը ցանկացած ժամանակ կարող է դառնալ ռազմադաշտ Արևելքի և Արևմուտքի շահերի միջև:

2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 ՊԱՏԵՐԱԶՄ

Ադրբեջանը հարձակվեց Անկախ Արցախի հանրապետության վրա, որը ձեռք էր բերել 1991 թվականի սեպտեմբերի 2-ին համառ պայքարից ու փորձություններից հետո: 100 տարի անց էլ ոտքի կանգնած հայ ժողովուրդը կերտում է նորանկախ պատմությունը իր քաջասիրտ որդիներով, բայց թուրք-ադրբեջանական տանդեմին, ինչպես նաև դավաճանական քայլերին չդիմանալով հայ քաջարի զինվորը, որը զարմացրել էր աշխարհին իր հերոսություններով, պարտվեց ... Կնքվեց Ռուսաստանի միջնորդությամբ 2020 թվականի նոյեմբերի 9-ի ամոթալի պայմանագիրը, որը ստորացուցիչ էր հայ ժողովրդի համար: Ըստ պայմանագրի Արցախի յոթ շրջանները Քարվաճառն ու Լաչինը հանձնում է թուրքին: Ազերին մտավ Հայաստանի ինքնիշխան տարածք և միջազգային լռությունը նորից խոսում է դավադիր, հակահայ խաղերի մասին: Հայաստանը ծվեն-ծվեն է արվում և ներկա իշխանությունները ամուլ դիրքորոշում են բռնել «Խաղաղություն հարևանների հետ» քողի տակ: 100 տարի անց էլ Մեծ Թուրանը փորձում է իրականացնել իր հեռահար նպատակները Հայաստանի հաշվին: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական պայքար է գնում մեծ տերությունների միջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

100 տարի անց ոտքի կանգնած հայ ժողովուրդը կերտում է նորանկախ պատմությունը իր քաջասիրտ որդիներով:

Վտանգը մեծ է թշնամին նենգ, պետք է աչալուրջ լինել և զգոն, պաշտպանենք մեր ազգային շահերը և կուլ չգնանք մեծ տերությունների ծավալապաշտական ձգտումներին, հզորացնենք միացյալ և անկախ Հայաստանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Կարապետյան «1920թ. Հայ-թուրքական պատերազմը»
2. Ս. Պողոսյան «Հայաստանը 20-րդ դարում»
3. Է. Գյոզալյան «Հայաստանի առաջին Հանրապետությունը և Ազգային Լիգան»
4. Հր. Սիմոնյան «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից»